ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՏԵՂԾՎԱԾ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԻՍՏԻ

Ք.Մասիս 03.02.2025թ

Ժամը՝ 11:00

Մասնակցում էին ՝

Հանձնաժողովի նախագահ՝

Նորայր Հակոբյան- համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Նվարդ Սահակյան- համայնքի ղեկավարի օգնական

Հանձնաժողովի քարտուղար՝ Անգելինա Խաչատուրյան - համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /զարգացման և ներդրումների գծով/

Հանձնաժողովի անդամներ՝

Ծովինար Գալստյան- աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ

Սամվել Համբարձումյան-<<Մասիս համայնքի բնակչության հատուկ սպասարկում և համայնքի ենթակառուցվածքների սպասարկում>> ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ

Տիգրանուհի Սուքեյան - ՀԵԾ <<Աստղաբնակ>> ՀԿ-ի նախագահ

Արսեն Եղիազարյան-համայնքի ավագանի

Լիլիթ Բաբայան- համայնքի բնակիչ

Արմեն Գրիգորյան - կամավոր

Մակիչ Պողոսյան – կամավոր

Օրակարգ

Մասիս համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում առաջարկների ներկայացման ժամկետի երկարաձգում:

Լսեցին.

1. Հանձնաժողովի նախագահ Նորայր Հակոբյանին,

Նա արձանագրեց, որ Մասիս համայնքի ղեկավարի 10.01.2025թ հաստատած մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման պլան-ժամանակացույցի համաձայն ՝ առաջարկների ներկայացման վերջնաժամկետը սահմանված էր փետրվարի 2-ը, սակայն կարիք է առաջացել երկարեցնելու վերջնաժամկետը:

2. Հանձնաժողովի նախագահի տեղակալ Նվարդ Սահակյանին,

Նա ներկայացրեց, որ բազմաթիվ բնակիչներ դիմել են խնդրանքով, որ երկարացվեն առաջարկների ներկայացման վերջնաժամկետը: Բնակչների մի մասը թյուրիմացաբար իրենց առաջարկները տեղադրել էին մեկնաբանությունների էջերում:

Հաշվի առնելով, որ ՀՀ Կառավարության 02 նոյեմբերի 2023 թվականի 1890-Ն որոշմամբ սահմանված մասնակցային բյուջետավորման ծրագրերի սուբվենցիոն հայտերի ներկայացման վերջնաժամկետը թողնվել է անփոփոխ՝ մինչև ապրիլի 1-ը և ընդառաջելով

բնակիչների խնդրանքին՝ առաջարկվեց փոփոխել 10/01/2025թ" հաստատված ժամանակացույցը: Սահմանել նոր ժամանակցույց՝ երկարաձգելով մասնակցային բյուջետավորման գործընթացի առաջարկների ներկայացման ժամկետը և փոփոխել գործընթացի մյուս փուլերի ժամկետները:

Հանձնաժողովը որոշեց.

1"Փոփոխել մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակացույցը, Երկարաձգելով մասնակցային բյուջետավորման գործընթացի առաջարկների ներկայացման ժամկետը մինչև 05/02/2025թ" :

2" Փոփոխված ժամանակացույցը ներկայացնել համայնքի ղեկավարի հաստատմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Նորայր Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Անգելինա Խաչատուրյան